ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/39/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 8 ապրիլի 2026թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի ապրիլի 8-ին քննության առնելով «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ղեկավար Արսեն Վարդանյանի կողմից 2024 թվականին Կուսակցության կողմից չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/39/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Ի. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ

2024 թվականի ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվության (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) մեջ առկա են անհամապատասխանություններ:

1.2 Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Կուսակցության օգտին իրականացվել է 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով անանուն նվիրատվություն (այսուհետ՝ նաև Նվիրատվություններ):

1.3 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 01/4340-2025 գրությամբ՝ Հանձնաժողովը, Կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության ստուգման նպատակով, Արսեն Վարդանյանից պահանջել է ներկայացնել Կուսակցության բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների քաղվածքները և այդ քաղվածքների խմբագրվող (Excel) տարբերակները, ինչպես նաև գույքը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով Կուսակցությանը հանձնելու գործարքների վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ դրանց պայմանագրերը, իսկ անշարժ գույքի դեպքում՝ նաև այդ պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցումը հաստատող փաստաթղթերը:

1.4 Ի պատասխան 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 01/4340-2025 գրության՝ Արսեն Վարդանյանի կողմից 2025 թվականի նոյեմբերի 11-ին Հանձնաժողով է ներկայացվել Կուսակցության բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների քաղվածքները (AMD, EUR, USD և RUB հաշիվների), իսկ 2026 թվականի հունվարի 15-ին՝ Կուսակցության և «Էլկոմպ» ՍՊ ընկերության միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը, ինչպես նաև Կուսակցության իրավաբանական հասցեի կոմունալ վճարումների մասին տվյալները:

1.5 2025 թվականի դեկտեմբերի 29-ին թիվ 01/4929-2025 գրությամբ Հանձնաժողովը Արսեն Վարդանյանին հայտնել է Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների մասին և պահանջել է այդ անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր:

1.6 2026 թվականի հունվարի 8-ին Արսեն Վարդանյանը N 01 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում՝ 2024 թվականի ընթացքում Կուսակցության կողմից իրականացված երկու համագումարների և երկու միջոցառումների վերաբերյալ: Միաժամանակ ներկայացվել են վերը նշված համագումարների և միջոցառումների կազմակերպման համար՝ Կուսակցության կողմից ծախսած միջոցների մասին տվյալներ:

1.7 Հանձնաժողովը Տարեկան հաշվետվության ստուգման տվյալների և Ա.Վարդանյանի կողմից ներկայացված պարզաբանումների, հիմնավորող փաստաթղթերի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի մարտի 10-ին Արսեն Վարդանյանին է ուղարկել թիվ 01/626-2026 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 14:00-ին Հանձնաժողով, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 14:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված գրությունն Արսեն Վարդանյանը ստացել է 2026 թվականի մարտի 12-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.8 2026 թվականի մարտի 17-ին պատշաճ ծանուցված Արսեն Վարդանյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 52/26 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.9 2026 թվականի մարտի 18-ին 01/725-2026 գրությամբ Հանձնաժողովը ծանուցում է ուղարկել Արսեն Վարդանյանին՝ հայտնելով, որ թիվ ՎԻՎ 52/26 արձանագրության հիման վրա կայանալիք գործի քննության օրը հետաձգվել է և նշանակվել 2026 թվականի ապրիլի 8-ին՝ ժամը 14:30:

1.10 Առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 3-ին 01/725-2026 գրությունը ևս մեկ անգամ ուղարկել է Կուսակցության և Արսեն Վարդանյանի հասցեներին՝ միաժամանակ տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում

(www.azdarar.am) և ուղարկելով վերջինիս փաստացի բնակության վայրի՝ ՀՀ, Ամավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարին:

Նշված գրությունը Արսեն Վարդանյանն ստացել է 2026 թվականի ապրիլի 2-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.11 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արսեն Վարդանյանի ներկայությամբ 2026 թվականի ապրիլի 8-ին՝ ժամը 14:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Սույն վարույթի շրջանակներում թիվ ՎԻՎ 52/26 արձանագրության կազմման ընթացքում վարույթի մասնակից Արսեն Վարդանյանը հայտնել է, որ Կուսակցության ստեղծումից հետո դիմել է Կուսակցության համար բանկային հաշիվ բացելու համար, որը տևել է մոտ 6 ամիս: Այդ պատճառով Կուսակցության կողմից կազմակերպված միջոցառումների գումարները չեն մուտքագրվել Կուսակցության բանկային հաշիվ և չեն արտացոլվել Կուսակցության Տարեկան հաշվետվության մեջ: Կուսակցության կողմից կազմակերպված միջոցառումների ծախսերն իրականացվել են իր և իր գաղափարակից ընկերների կողմից, սակայն ում կողմից ինչքան գումար է ծախսվել՝ հստակ նշել չի կարող:

Միաժամանակ Արսեն Վարդանյանը հայտնել է, որ [redacted] հասցեում Կուսակցությունն ունի գրասենյակ, որը Կուսակցությանը հանձնված է անհատույց օգտագործման իրավունքով: Տեղեկացրել է նաև, որ այդ հասցեի կոմունալ վճարներն իրականացվել են իր և իր գաղափարակից ընկերների կողմից, սակայն չափաբաժինների վերաբերյալ չունի որևէ հավաստող փաստաթուղթ:

Արսեն Վարդանյանը նշել է նաև, որ վերը նշված փաստերի առթիվ որևէ հիմնավորող փաստաթուղթ գտնելու դեպքում՝ կներկայացնի Հանձնաժողով:

2.2 Գործի քննության ընթացքում, ի պատասխան Հանձնաժողովի անդամների հարցերի՝ Արսեն Վարդանյանը հայտնեց, որ նվիրատվություն կատարած անձանց կողմից նվիրատվություն կատարելը հավաստող փաստաթղթեր չունի, այնուամենայնիվ նշեց, որ

Կուսակցության ծախսերը հիմնականում հոգացել են ինքը, իր հարազատ եղբայրը՝ Վարդանյան Արմենը, Սահակյան Արծրունը, ինչպես նաև գաղափարակից այլ ընկերներ, որոնց անունները չի հիշում ու չի կարող նշել: Միաժամանակ նշեց, որ արձանագրության մեջ իր կողմից նշված այն փաստը, որ հնարավորության դեպքում կներկայացնի նվիրատվություն կատարած անձանց տվյալները և հավաստող փաստաթղթերը՝ իրագործել չի հաջողվել: Արսեն Վարդանյանը նշեց նաև, որ նույնը վերաբերում է Կուսակցության կողմից օգտագործվող գրասենյակի կոմունալ վճարումները կատարելու հետ՝ կատարվել են տարբեր մարդկանց կողմից, և ինքը չունի այդ վճարումները հիմնավորող փաստաթուղթ:

Արսեն Վարդանյանը նաև նշեց, որ իր կողմից Կուսակցության օգտին կատարված ծախսերը կատարվել են իր ստացած զինվորական թոշակի հաշվին, միաժամանակ արձանագրելով, որ իր կողմից Հանձնաժողով ներկայացված գույքի և եկամուտների հայտարարագրում թոշակի տվյալները սխալ է հայտարարագրել՝ ամսական վճարը ներկայացնելով որպես դրամական միջոցի մնացորդ:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/39/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Արսեն Վարդանյանը 2024 թվականի օգոստոսի 23-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը:

3.2 Կուսակցության նախագահի՝ 2026 թվականի հունվարի 15-ի N 02 գրության համաձայն՝ Կուսակցության գրասենյակի կոմունալ ծախսերը 2024 թվականի ձմեռային ամիսների ընթացքում կազմել են 80.000 ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնել է, որ կոմունալ վճարումները Կուսակցության օգտին կատարել են գաղափարակից գործընկերները, որոնց վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել:

3.3 2024 թվականի սեպտեմբերի 21-ին Ղուկասավան համայնքում Կուսակցության կողմից անց է կացվել Անկախության հռչակագրի ընդունման 34-րդ տարեդարձի կապակցությամբ միջոցառում, որի անցկացման շրջանակներում անձանց տեղափոխման համար ծախսվել է

30.000 ՀՀ դրամ՝ համաձայն Կուսակցության նախագահի 2026 թվականի հունվարի 8-ի N 01 գրության: Ըստ Կուսակցության ղեկավարի հայտնած տվյալների՝ վճարումը կատարվել է իր կողմից, սակայն որևէ հաստատող տվյալներ չեն ներկայացվել:

3.4 2024 թվականի նոյեմբերի 30-ին կայացել է Կուսակցության արտահերթ համագումար, որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 160.000 ՀՀ դրամ՝ համաձայն Կուսակցության նախագահի 2026 թվականի հունվարի 8-ի N 01 գրության, սակայն վճարումները կատարած անձանց վերաբերյալ տվյալները ևս Կուսակցության նախագահի կողմից Հանձնաժողովին չեն հաղորդվել:

3.5 2024 թվականի հոկտեմբերի 5-ին Կուսակցության գրասենյակում կազմակերպվել է միջոցառում՝ Ուսուցչի տոնի առթիվ, որի կազմակերպմանն ուղղված ընդհանուր ծախսը կազմել է 80.000 ՀՀ դրամ՝ համաձայն Կուսակցության նախագահի 2026 թվականի հունվարի 8-ի N 01 գրության, սակայն վճարումները կատարած անձանց վերաբերյալ տվյալները Հանձնաժողովին չեն տրամադրվել:

3.6 Գործի քննության օրվա դրությամբ նվիրատուների վերաբերյալ տվյալները (անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համարը) Կուսակցության նախագահի կողմից Հանձնաժողով չեն ներկայացվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ

տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:

4.2 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Հաշվետվությունը ներառում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ կուսակցություններին և նրանց անդամներին տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում ստացած նյութական և ոչ նյութական աջակցության նպատակով հատուցված (ներառյալ՝ դասընթացների, ճանապարհածախսի հատուցում և այլն) ծախսերի մասին տեղեկություններ:

4.3 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ անանուն անձանցից:

4.4 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

4.5 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.6 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.7 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև բոլոր կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը:**

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել կոռուպցիոն այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, կուսակցության ղեկավար մարմնի անդամի կողմից **անանուն** նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել կուսակցության ղեկավար մարմնի անդամի ակտիվ, նախաձեռնողական գործողություններով, երբ վերջիններս

ձեռնարկում են կուսակցության օգտին **անանուն** նվիրատվությունների ներգրավումը կամ պարզապես համաձայնություն են տալիս այդպիսի առաջարկություններին:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների ստվերային ֆինանսավորումները, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, խթանելու ֆինանսական թափանցիկության քաղաքականությանը՝ նպաստելով արդարությանը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են ապօրինի, ստվերային ֆինանսավորումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությանը և մասնակցությանը, ինչպես նաև բարձրացնում է քաղաքացիների վստահությունը քաղաքական ուժերի նկատմամբ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված զանցանքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով Օրենսդրի կողմից նախանշված՝ կուսակցության ֆինանսական հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման նպատակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում հաստատված փաստ է այն, որ ինչպես օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այնպես էլ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Կուսակցության կողմից Կուսակցությանը անանուն նվիրատվություն կատարած անձանց տվյալները օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել, ուստի չի ապահովվել Կուսակցության ֆինանսական գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության օրենսդրի նպատակը:

Միաժամանակ Արսեն Վարդանյանի կողմից չեն պահպանվել Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթները, այն է՝ **չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:**

Նշվածով պայմանավորված չի ապահովվել նաև օրենսդրի նախանշված՝ Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության վերահսկողության նպատակը, քանի որ, ըստ էության, Կուսակցության օգտին նվիրատվություններ կատարած անձանց վերաբերյալ տվյալները չներկայացնելու պայմաններում չի ապահովվում Կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովումը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տեղեկատվության բացակայության պայմաններում հնարավոր չէ նույնականացնել կուսակցություններին նվիրատվություն իրականացնող անձանց, ինչով պայմանավորված՝ հնարավոր չէ ապահովել կուսակցությունների ֆինանսական թափանցիկության քաղաքականությունը և նվազեցնել կոռուպցիայի ռիսկը:

Տվյալ դեպքում Արսեն Վարդանյանի հայտնած տվյալներում կամ առհասարակ բացակայում են Սահմանադրական օրենքի ՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տվյալները, կամ անձը հաստատող փաստաթղթերի համարները: Միևնույն ժամանակ՝ բացակայում է որևէ փաստաթուղթ, որ կհավաստեր նվիրատվությունները վերջիններիս կողմից կատարված լինելու փաստը, հետևաբար՝ Կուսակցությանը կատարվել է անթույլատրելի՝ անանուն անձանց կողմից կատարված նվիրատվություն:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի ՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալների (անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը) և նվիրատվությունները կոնկրետ անձանց կողմից կատարված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի բացակայությամբ, ինչպես նաև՝ հիշյալ նվիրատվությունների գումարը օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուներին չփոխանցելու հանգամանքով պայմանավորված՝ «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ» կուսակցության նախագահ

Արսեն Վարդանյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում, այն է՝ կուսակցության կողմից օրենքով չթույլատրված նվիրատվությունները (անանուն նվիրատվությունները) օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չի փոխանցել:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Արսեն Վարդանյանը 2024 թվականի օգոստոսի 23-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ինչով պայմանավորված՝ հանդիսանում է նաև Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ Կուսակցության օգտին կատարված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կատարված նվիրատվությունը ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք պետական բյուջե փոխանցելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Արսեն Վարդանյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 24-րդ հոդվածի 6-րդ մասով, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության նախագահ Արսեն Վարդանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***
2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Վարդանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արսեն Վարդանյանին տրամադրել երեսնօրյա ժամկետ նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը պետական բյուջե փոխանցելու համար:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ